ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/43542-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-098-22.11.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1433 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-098-22.11.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է հնարավորություն տալ ժառանգներին ընդունելու ժառանգությունը ոչ թե անձի մահվան պահից վեց ամսվա ընթացքում, այլ մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները՝

1. Օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ժառանգությունը բացվում է քաղաքացու մահվանից հետո:**

Օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է,** իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում դրա մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում**:

Օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն **ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները**:

Օրենսգրքի 1246-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին է տրվում ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո**, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Օրենսգրքի 1249-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վճարման ենթակա, սակայն քաղաքացու կյանքի օրոք որևէ պատճառով չվճարված՝ աշխատավարձի, թոշակների, նպաստների և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարներն ստանալու իրավունքը պատկանում է մահացածի ընտանիքի անդամներին, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց:

Սույն հոդվածի 1-ին կետի հիմքով **գումարներ վճարելու վերաբերյալ պահանջները պետք է ներկայացվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում**:

Վերոնշյալ դրույթներից բխում է, որ օրենսգրքով քաղաքացու մահվանից հետո այլ անձանց մի շարք իրավունքների իրացման ժամկետը, ինչպես նաև ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու ժամկետը, պայմանավորված են ժառանգության բացման օրվա հետ, որը համարվում է քաղաքացու մահվան օրը:

Առաջարկվող կարգավորմամբ կլուծվի միայն ժառանգությունն ընդունելու հետ կապված խնդիրը, սակայն գործող կարգավորումների դեպքում, եթե ժառանգատուի ինքնությունը մահվան պահից առնվազն մեկ ամսում հաստատված չի լինի, և ինքնությունը պարզելուց հետո կկատարվի մահվան պետական գրանցում՝ կառաջանա խնդիր այլ անձանց իրավունքների իրացման՝ օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվարկման սկիզբը որոշելու առնչությամբ:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկում ենք նախագծով առաջարկվող լրացման փոխարեն օրենսգրքի 1188-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Այն դեպքում, երբ քաղաքացու ինքնությունը չի հաստատվել մահվան պահից առնվազն մեկ ամսվա ընթացքում, ժառանգության բացման օրը համարվում է քաղաքացու մահվան պետական գրանցման օրը:»:

2. Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվում է **մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում** ժառանգությունն ընդունելու հնարավորություն, միաժամանակ, անցումային դրույթներով օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում ժառանգությունն ընդունելու հնարավորություն է նախատեսվում այն դեպքերում, երբ ժառանգատուն մահացել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո:

Հարկ է նկատի ունենալ, որ նախատեսված կարգավորումների դեպքում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո մահացած և օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մահվան պետական գրանցում իրականացվելու դեպքում հստակ չի լինի՝ ժառանգության ընդունման ժամկետի հոսքը պետք է հաշվարկվի մահվան պետական գրանցման, թե օրենքն ուժի մեջ մտնելու պահից:

Վերոնշյալով պայմանավորված՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև այն ժառանգատուների ժառանգության ընդունման հարաբերությունների նկատմամբ, որոնք մահացել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո և որոնց ինքնությունը չի հաստատվել մահվան պահից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:

3. Եթե 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո մահացած և առնվազն մեկ ամսվա ընթացքում ինքնությունը չհաստատված քաղաքացու մահվան պետական գրանցումն իրականացվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ժառանգությունը կարող է ընդունվել սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:»:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-098-22.11.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված վեց ամսվա ժամկետն անցնելուց հետո ժառանգությունը կարող է ընդունվել մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում, եթե ժառանգատուի անձի ինքնությունը չի հաստատվել մահվան պահից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում:»:

Հոդված 2. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաեւ այն ժառանգատուների ժառանգության ընդունման հարաբերությունների նկատմամբ, որոնք մահացել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում ժառանգությունը կարող է ընդունվել սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա է ժառանգատուի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգության բացման վայրի նոտարին օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ հանձնված դիմում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված կարգավորումից հետեւում է, որ օրենսդիրը ժառանգության ընդունման համար սահմանել է ժառանգության բացման օրվանից, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից հաշվարկվող վեցամսյա ժամկետ:

Միեւնույն ժամանակ, ժառանգի կողմից ժառանգություն ընդունելիս բարդություններ են առաջանում այն դեպքում, երբ ժառանգատու անձի մահը վրա է հասել հաստատապես

հայտնի հանգամանքներում (օրինակ՝ ռազմական գործողությունների, տարերային աղետների ժամանակահատված), սակայն մինչեւ մահացածի ինքնությունը հաստատելն անցել է ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը: Այսպիսի իրավիճակ հատկապես առաջացավ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկիզբ առած պատերազմի հետեւանքով:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածում նախատեսվող լրացմամբ առաջարկվում է վերոնշյալ դեպքերում հնարավորություն տալ ժառանգներին ընդունել ժառանգություն ոչ թե անձի մահվան պահից վեց ամսվա ընթացքում, այլ մահվան մասին պետական գրանցման օրվանից վեց ամսվա ընթացքում:

3. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում կկարգավորվի ժառանգության ընդունման գործընթացը, վերը ներկայացված իրավիճակն առաջանալու հետեւանքով ժառանգների կողմից ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1433-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-098-22.11.2021-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան